Սեպտեմբերի 18-ից Թիֆլիսի Կովկասագիտական դասընթացքներում սկսել է դասախօսել Կովկասեան լեզուների դիտակ Միւնխէնի համալսարանի ուսուցչապետ դոքտոր Ա. Դիրը, որ ունկնդիրներին պարզել է «Կովկասեան լեզուների համեմատական նկարագիրը»:

Առաջիկայ նոյեմբեր ամսին Անգլեան պատրաստութիւններ է տեսնում տօնելու իւր հանճարեղ զաւակներից մէկի, «Դրախտ Կորուսեալի» հեղինակ Միլտոնի ծննդեան երեք հարիւր ամեակը:

Նորերս Թիֆլիսում վախճանուած տիկ. Նամիսրեանը իւր թողած բոլոր դրամական և իրական գոյքը, որոնց տարեկան եկամուտը կազմում է մօտ 15000 ռուբլի—կտակել է բարեգործական զանազան նպատակների, ինչպէս՝ հոգեկան հիւանդներ խնամելու, գպրոցական թոշակներ յատկացնելու և այլն:

—Թիֆլիսում ուսուցիչ Ա. Եղիազարեանը ձեռնարկել է հայերէն մի նոր թերթ հրատարակելու «Միտք» անունով:

—Դերասաններ Աբէլեանն ու Արմէնեանը կազմել են հայ դերասանների մի խումբ, որ Բաքուի հայ. Կուլ. ընկերութեան դրամական օժանդակութեամբ պէտք է մի շարք ներկայացումներ տայ Կովկասում, Ռուսաստանի մայրաքաղաքներում ու հայաշատ քաղաքներում, Տաճկահայաստանում և Անդրկովկասեան երկրում: Ռէպէրտուարը կազմուած է եւրոպական և հայկական պիէսներից:

«ԱՐԱՐԱՏ»ի ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նորին Մեծութեան Կովկասի Փոխարքան, յունիսի 16-ից Բագուի քաղաքապետի անուամբ տրուած դրութեամբ, թոյլատրել է Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան ամենուրէք հանդանակութիւն բռնալ, Հայկական անդրանիկ գրող Խաչատուր Աբովեանին յուշարձան կանգնեցնելու Երևան քաղաքի հասարակական հրապարակներից մէկում.

Յայտնելով Ձեզ այդ մասին և հաւատի լինելով, որ Դուք համակրութեամբ կընդունէք Միութեանս առաջարկը, յաւերժացնել Հայկական մեծ վիպագիր և հասարակական գործչի յիշատակը, խորհուրդս խոնարհաբար խնդրում է Ձեզ, բարի լինէք Ձեր պատուական լրագրի խմբագրատանը հանգանակութիւն բանալ—յօգուտ վերոյիշեալ յուշարձանի կառուցման. նոյնպէս և բարի լինէք յայտարարել ի գիտութիւն ընդհանուրի *։

Խորին յարգանօք

Փոխ Նախագահ Գլխաւոր Խորհրդի բժ. Յ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

Ի տ. Քարտուղարի Ա.Լ. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. Minas Berberian.—Kuvauksia Armenista,
2. **Սարգիս Սահակեան Լալայեան.**—*Ի՞նչ է հարկաւոր գիւղին, Մոսկուա*, 1908. *Գինն է* 1 *ռուբլի*
3. **Ա. Յազարեղի.** *Սիբիրական. կամ.* 4 *գործ թարգմ.* Գ. *Միրաղեան. Թատրոնական Գրադարան* № 1.
4. **Երուանդ վարդապետ** *վոխադր.*—*Կրօնի և կրօնի գիտութիւնը ըստ Տրեօլչի. արտատպած «Արարատ» ամսագրից. Վաղարշապատ*, 1907
5. **Երուանդ վարդապետ Տէր Միքաելեանց**—*Բաբելոն և Ս. Գիրք յաւելուած Գիլգամէշի վէպը. Ս. Էջմիածին*, 1908. *Գինն է* 15 *կ. Բերբերեան գրադարան* № 2
6. **Հ. Աճառեան.**—*Ս. Մեսրոպի և գրերու գիւտի պատմութեան աղբիւրներն ու անոնց քննութիւնը. Բարիզ*, 1907. *Հրատ. «Բանասէր»-ի.*
7. **Տմբլայի Խաչատ** (*Կ. Կ. Մելիք Շահնազարեանց*) *Զուռնա—Տմբլա. Գիրք Ա. և Բ. Վաղարշապատ*, 1907 *և* 1907. *Ա. և Բ. գրքերի Գինն է* 1 *ռ.* 15 *կ.*

---

* *Խմբագրութիւնս սիրով կընդունի այս նպատակի համար նուիրաբերութիւններ Բաղուի Կուլտուրական Միութեան հասցնելու համար։*